ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վառելիքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան 16.01.2018թ

ժամը 11:00

Նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ. Այվազյան

անդամներ՝ Մ. Քոչարյան, Դ. Աղասինյան

քարտուղար՝ Ն. Նիկոլայան

Հայտերի բացման մասին

(Հ. Այվազյան)

Ընդունել ի գիտություն՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Վառելիքի» ձեռքբերման համար կազմակերպվել է «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որը հրապարակվել է ՀՀ Ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական ինտերնետային կայքի համապատասխան բաժնում:

«ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով «Վառելիքի» ձեռքբերման հայտերի բացման նիստը տեղի ունեցավ ք. Երևան, Թաիրովի 15, 311 սենյակ հասցեում, 2018 թվականի հունվարի 16-ին ժամը 11:00-ին:

Գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

1. Տվյալներ հայտ ներկայացրած մասնակիցների վերաբերյալ

«ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

h/h	Մասնակիցների անվանումը	Հասցեն, հեռախոսամարը
1	«ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	ք. Երևան, Պուշկինի 1, հեռ. (010) 54-09-11

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. Տվյալներ՝ ծրարի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

«ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերության հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

3. Տվյալներ՝ բացված ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ծրարում առկա էին հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

4. Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան և գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

5. Մասնակցի առաջարկած գինը

Մասնակցի առաջարկած գինը հետևյալն է՝

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ*	Ընդհանուր գինը
1	Բենզին (ռեգուլյար)	5533333,33	1106666,67	6640000

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

6. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1-ին տեղ զբաղեցրած մասնակից որոշելու համար մասնակցին հրավիրել բանակցությունների, քանի որ մասնակցի առաջարկած գինը գերազանցում է գնման հայտով նախատեսված նախահաշվային գինը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

7. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

8. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ բանակցությունների վարման նիստ հրավիրել «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերությանը բանակցությունների վարման մասին ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ օրվա ժամը 12:00-ին ք.Երևան, Թաիրովի 15, 311 սենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ. Այվազյան

Անդամներ՝ _____ Մ. Քոչարյան

_____ Դ. Աղասինյան

Քարտուղար՝ _____ Ն. Նիկոլայան